

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

АРМАВИРСКИЙ МАРЗ

МУНИЦИПАЛИТЕТ

С. АРЕВАШАТ

հեռ. 098443308

тел. 098443308

Էլ. փոստ [arevashatgyux@mail.ru](mailto:arevashatgyux@mail.ru)  
թիվ \_\_163\_\_

06. 08. 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝  
Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի ղեկավարի 2020 թվականի առաջին կիսամյակի աշխատանքային գործունեության հաշվետվությունը:

Արևաշատի համայնքի ղեկավար



Ս.Գևորգյան

Կատարող

Առաջին կարգի մասնագետ

Ն. Արզումանյան

Հեռ.+374-99-96-21-20

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ  
ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի ղեկավարը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրանից բխող այլ իրավական ակտերի պահանջներով, 2020թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրականացրել է որոշակի աշխատանքներ՝ ստորև ներկայացվող հետևյալ բնագավառներում.

1. *Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների բնագավառ:*

- Համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով հանդես ենք եկել տարբեր միջնորդություններով մարզպետարանում, Վաղարշապատի տարածքային ստորաբաժանումում, նոտարական գրասենյակում, քաղաքացիական ակտերի կացության ակտերի գրանցման բաժնում, սոցիալական ծառայության բաժնում, ոստիկանության բաժանմունքներում, զինվորական կոմիսարիատում և այլ կազմակերպություններում:
- Կատարվել է համայնքի բնակիչ հանդիսացող 75 քաղաքացիների ընդունելություն, քննարկվել է տարբեր բնույթի հարցեր, առաջարկություններ, որոնց մեծ մասին տրվել է դրական լուծում
- . 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել է 19 դիմում, որոնց ժամանակին տրվել է պատասխան:
  - . ստացվել է 253 գրություն
  - . ուղարկվել է մարզպետարան, անշարժ գույքի կադաստրի ստորաբաժանում և այլ կազմակերպություններին 138 գրություն
  - . կայացվել է համայնքի ղեկավարի 25 որոշում, ավագանու 1 նիստ և 8 որոշում
  - . արձակվել է 13 կարգադրություն
  - . բնակչությանը տրամադրվել է տարբեր բնույթի 121 տեղեկանքներ
  - . աշխատակազմի միջոցով կատարվել է համայնքի բնակչության ամենամյա սեռատարիքային հաշվառման աշխատանքներ
  - . կազմակերպվել է համայնքի գրքերի, գործավարության մատյանների, արխիվային գործի, տարբեր բնույթի հաշվետվությունների, տեղեկատվությունների, հաշվապահական հաշվառման և այլ փաստաթղթերի կազմման և վարման գործընթացը
  - . համայնքապետարանի աշխատակազմի միջոցով օժանդակվել և անհրաժեշտ փաստաթղթեր է տրամադրվել համայնքի բնակիչներին տարբեր ֆինանսական կազմակերպություններից և բանկերից գյուղատնտեսական, բնակարանային, շինարարության և այլ վարկեր ստանալու նպատակով
  - . ավարտին է հասցվել 2019 թվականին ներկայացված սուբվենցիոն հայտերի աշխատանքների կատարումը և փաստաթղթերը ներկայացվել է համապատասխան գերատեսչական մարմիններին:
  - .տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվությունը խմելու ջրի ջրագծերի անցկացման նախագծման փաստաթղթերի կազմման համար:
  - . կառավարությանն է ներկայացվել Մանկապարտեզի կառուցման սուբվենցիոն հայտ
  - . Համայնքում ստեղծվել է կանխարգելիչ աշխատանքներ իրականացնող թիմ:
  - .Պարբերաբար բնակչությունը իրազեկվել է Հայաստանի Հանրապետության պարետի որոշումները:
  - . COVID-19 կանխարգելման նպատակով մշակույթի տանը, համայնքապետարանում, կապի բաժանմունքում, ԲՄԿ-ում իրականացվել է կանխարգելիչ և ախտահանիչ միջոցառումներ:
  - . Համայնքում բացառվել է ժամանցային և հանրային միջոցառումների իրականացում:

- . Արգելվել է Հայաստանի Հանրապետության պարետի որոշմամբ սահմանված մարդկանց թվաքանակից ավել կուտակումները:
- . Հոգեհանգստի և հուղարկավորության արարողությունների կազմակերպման ընթացքում համայնքապետարանի աշխատակիցների միջոցով հսկողություն է սահմանվել արարողություններին մասնակցող անձանց նկատմամբ խստորեն պահպանելով համավարակի տարածման կանխարգելման անվտանգության կանոնները:
- . համայնքում կազմակերպվել է դիմակների բաժանում
- . հաճախակի կազմակերպվել է համայնքապետարանի, համայնքի փոստային բաժանմունքի , ԲՄԿ-ի և համայնքային տրանսպորտի ախտահանում:

## **2. Ֆինանսների բնագավառ**

Մեծ ուշադրություն է դարձվել համայնքի բյուջեով նախատեսված բյուջեի եկամուտների հավաքագրմանը, տնօրինել ենք բյուջեի ֆինանսական միջոցները, ապահովվել դրանց նպատակային օգտագործումը, ստորագրել են բոլոր ֆինանսական փաստաթղթերը:

- Բյուջեի եկամուտների գծով տարեկան կատարողականը կազմում է 64,5 %, որից
- հողի հարկ 92,1%
  - գույքահարկ 65,7%
  - վարձակալական 208,8%
  - տեղական տուրքեր 85,7 %

## **3.Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ**

- . Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշտման աշխատանքներ:
- . կատարվել է նաև կուտակված շինարարական և կենցաղային աղբի մաքրում և տեղափոխում աղբավայր:
- . կատարվել է համայնքային ճանապարհների կողային հատվածների խոտածածկի մաքրման աշխատանքների
- . Իրականացվում է կանոնավոր աղբահանություն համայնքի ամբողջ բնակելի տարածքում , շաբաթը 1օր: Աշխատավարձը տրամադրվում է համայնքի բյուջեից:

## **4.Պաշտպանության և հասարակական կարգի պահպանության բնագավառ**

- . Զինկոմիսարիատից ստացված ծանուցագրերը հանձնվել են գորակոչիկներին, իսկ բացականների համար տրվել են համապատասխան տեղեկանքներ՝ նրանց մոտավոր գտնվելու վայրի վերաբերյալ:
- . Մեծ շուքով ենք նշել Հայկական բանակի Մայրության ու գեղեցկության և հաղթանակի օրը:
- . Մշտական օժանդակություն է ցուցաբերվել համայնքի տարածքը սպասարկող ոստիկանության Էջմիածնի բաժնի աշխատակիցներին, հասարակական կարգը պահպանելու, վարչական և քրեական իրավախախտումները բացահայտելու և կանխելու նպատակով:

. Ոստիկանության աշխատակիցներին պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվել համայնքում ժամանակավոր բնակվող անձանց մասին:

## **5. Հողօգտագործման և գյուղատնտեսության բնագավառ**

- . Կատարվել է համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներ, համագործակցելով մարզպետարանի, գյուղ վարչության և կադաստրի տարածքային ստորաբաժանման հետ:
- . Մատուցվել է մասնագիտական խորհրդատվական-ծառայություն համայնքի հողօգտագործողներին, բույսերի ճիշտ մշակման հիվանդությունների դեմ պայքարի, ոռոգման ժամկետների ու եղանակների, ստացված գյուղ մթերքների վաճառքի ու մթերման գործընթացում:
- . Իրականացվել է համայնքի գյուղատնտեսական մշակաբույսերի, ցանքատարածությունների բազմամյա տնկարկների տարածքների հաշվառում և տվյալների ներկայացում վիճակագրական ծառայություն:

## **6. Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ**

- . Համայնքում գործում է մեկ բուժ. մանկաբարձական կետ, որը սպասարկում է համայնքի բնակիչներին:
- . Բուժ մանկաբ.կետը ապահովված է նոր սարքավորումներով:
- . 2020թվականի առաջին կիսամյակի ընթացքում ընթացքում բուժ. մանկաբ.կետի ընդունելությունը կազմել է 3563 այց, որից՝ 2742-ը բարձր տարիքի, 821-ը մինչև 18 տարեկան երեխաներ
- . Կանխարգելիչ նպատակով այցերը կազմել են 1905
- . Կանխարգելիչ պատվաստումները կազմել են 557
- . Գրանցվել է 506 տնային կանչ, ներառյալ նորածինների այցերը
- . Կատարվել են լաբորատոր - գործիքային հետազոտություններ

## **7. Կրթության և մշակույթի բնագավառ**

1. Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց: Աշակերտների թվաքանակը՝ 214: Կազմակերպչական հարցերով աջակցություն է ցուցաբերվում միջն. դպրոցի բնականոն գործունեությանը: Գյուղապետարանի աշխատակազմի միջոցով ծնողների հետ տարվող բացատրական աշխատանքների արդյունքում դպրոցից խուսափող և պարտադիր ուսուցումից դուրս մնացող երեխաներ չկան:
2. Հայկական բանակի ստեղծման, Մայրության և գեղեցկության կապակցությամբ կազմակերպել ենք տոնական միջոցառումներ::

## **8. Սոցիալական հարցերի բնագավառ**

Դրամական օգնություն է հատկացվել համայնքի ծնունդ, մահ ունեցող և զինվորական ծառայությունից վերադարձած զինծառայողների ընտանիքներին: Դրամական աջակցություն է հատկացվել 9 ընտանիքների:

## **9. Առևտրի սպասարկման բնագավառ**

Սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվել համայնքի տարածքում գործող հասմունքներում՝ ժամկետամբ սուստանոցների մասնատոտ կամ հետու ուղղությամբ:

## II Համայնքի հիմնախնդիրները

*Արևաշատ համայնքն ունի չլուծված բազմաթիվ խնդիրներ, որոնք համայնքապետարանի միջոցով հնարավոր չէ լուծել, նրանցից ամենակարևորներն են՝*

1. Մանկապարտեզի շենքի կառուցումը:
2. Մշակույթի տան դահլիճի հիմնանորոգումը:
3. Խմելու ջրի ներտնտեսային նոր ցանցի կառուցումը:
4. Համայնքի փողոցների ասֆալտապատումը:

Այսօր Արևաշատ համայնքն ու համայնքի բնակիչը շատ հոգսեր ու խնդիրներ ունի, որոնցից ամենակարևորը համայնքում մանկապարտեզ ունենալ է: Համայնքում մանկապարտեզ ունենալը դարձել է երազանք::

Արևաշատ համայնքն ունի բազմաթիվ չլուծված խնդիրներ, որոնց մի մասը կկատարվեն 2020 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում:



ԱՐԵՎԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

/ՄՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ/